Սույն գործով նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է և Հայցվորի կողմից նախապես վճարվել է դատարան դիմելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը՝ 30.000 ՀՀ դրամը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում բացակայում է **գրավոր միջնորդությունը**՝ դատական ծախսերի հետ կապված, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Տրանսֆորմատորների գործարան ամպեր» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից «Տրանսֆորմատորների գործարան Ամպեր» ՓԲԸ-ի հետ 27.03.2024 թվականին կնքված «Ուժային տրանսֆորմատորների մատակարարման թիվ A-98/24» պայմանագրի միակողմանի լուծումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEFD-9011-48ED-8773 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am